ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի

Երևան, 12 օգոստոսի 2020թ.

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2020թ. օգոստոսի 12-ի նիստում քննարկեց դատախազ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված Կ. Գ.-ին կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում նշանակելու վերաբերյալ դրական եզրակացություն տալու մասին ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությունը:

Հաշվի առնելով Կ. Գ.-ի անձնական և մասնագիտական որակները և ղեկավարվելով ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Կ. Գ.-ին կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում նշանակելու վերաբերյալ: